ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՎԱՆԵՍԱ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/382 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
10	ՉԺՀ	Չափերը՝ պետք է լինեն առնվազն 1151 × 1027 × 1253 մմ: «Կրծքավանդակին ձգում» բացօթյա մարզասարքը կայուն կառուցվածք է, որը նախատեսված է բացօթյա պայմաններում անվտանգ մարզումներ իրականացնելու համար: Կառուցվածքը պետք է ունենա բարձր հարվածակայունություն և թրթռակայունություն: Վնասվածքների և հագուստի կամ մարմնի մասերի հնարավոր խցանման վտանգը բացառելու նպատակով մարզասարքը պետք է նախագծված և արտադրված լինի ԳՕՍՏ Ռ 57538-2017 ստանդարտի կամ համարժեք ԳՕՍՏ-ի պահանջներին համապատասխան: Մարզասարքը պետք է խարիսխային հեղույսներով ամրացվի բետոնե հիմքին կամ շրջանակին: Խարիսխային հեղույսների համար նախատեսված անցքերը պետք է փակվեն պլաստիկ խցաններով՝ անվտանգությունն ու գեղագիտական տեսքն ապահովելու համար: Մարզասարքը պետք է լինի հակավանդալային: Մարզասարքի շարժական տարրերը չպետք է ունենան սուր ելուստներ կամ փորվածքներ: Անկյուններն ու եզրերը պետք է լինեն կլորացված: Օգտագործողին հասանելի ելուստների կլորացման նվազագույն շառավիղը պետք է լինի առնվազն 3 մմ: Հեղույսային միացումների դուրս ցցված մասերը պետք է պաշտպանված լինեն պլաստիկ խցաններով կամ այլ համապատասխան եղանակով՝ ԳՕՍՏ Ռ 57538-2017-ի կամ համարժեք ԳՕՍՏ-ի պահանջներին համապատասխան և կառուցվածքի

			անվտանգությունն ապահովող ձևով: Առկայության դեպքում խողովակների դուրս ցցված և հասանելի ծայրերը պետք է փակված լինեն պլաստիկ հակավանդալային խցաններով: Կառուցվածքի բոլոր մետաղական մասերը պետք է ներկված լինեն պոլիմերային փոշեներկով՝ գործարանային պայմաններում թխման եղանակով, ինչը պաշտպանում է մետաղը կոռոզիայից: Խարիսխային հեղույսները պետք է լինեն ցինկապատ: ԳOUS Ռ 57538-2017-ի կամ համարժեք ԳOUS-ի համաձայն՝ յուրաքանչյուր մարզասարք պետք է համալրված լինի տեղեկատվական ցուցանակով, որի վրա նշվում են արտադրողի տվյալները, արտադրության ամիսը և տարեթիվը, արտադրանքի նշանակումը, տարիքային սահմանափակումները, ինչպես նաև օգտագործողի քաշի և հասակի սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը: Մարզասարքի հենարանը պետք է լինի բաղկացած լինի հարթակից և թիթեղային պատյանից: Պատյանի բոլոր մասերը պետք է լինի միմյանց միացված լինեն առնվազն 6×12 մմ չափսի պողպատ-պողպատ գամերով: Հենարանը պետք է լինի բաղկացած լինի հարթակից և պատյանից: Հարթակը պետք է պատրաստված լինի առնվազն 4 մմ հաստությամբ պողպատե թիթեղից, որը պետք է ծալված լինի բաց կորպուսային կառուցվածքի ձևով: Ծալումից հետո հարթակի չափսերը պետք է կազմեն առնվազն 739×260 մմ: Հարթակի վրա պետք է նախատեսված լինեն ամրացման անցքեր՝ առնվազն 617×200 մմ առանցքամիջյան հեռավորություններով: Վերին ճակատային մակերեսի անցքերի տրամագիծը պետք է կազմի առնվազն 32 մմ, իսկ ստորին մակերեսի անցքերինը՝ առնվազն 17 մմ: Հարթակի ընդհանուր բարձրությունը պետք է կազմի առնվազն 123 մմ և բաղկացած լինի առնվազն 40 մմ բարձրությամբ հիմնական հարթակից և դեպի վեր ծալված չորս կողերից: Ծալված կողերի բարձրությունը պետք է կազմի առնվազն 80 մմ: Կողերում պետք է նախատեսված լինեն անցքեր՝ պատյանը հարթակին միացնելու համար: Հարթակին պետք է ամրացված լինի պատյանը, որը պետք է բաղկացած լինի երկու կողային պատերից, առջևի և հետևի պատերից: Կողային պատերը և պատերը պետք պատրաստված լինեն առնվազն 2,5 մմ հաստությամբ թիթեղային մետաղից: Կողային պատերը բազմակողմանի երկարավուն դետալներ են՝ երկար եզրերի և վերին հատվածի ծալված պատերով: Վերին հատվածում պետք է նախատեսված լինի առնվազն 147 մմ տրամագծով անցք, որին պետք է միացված լինի 4 մմ հաստությամբ թիթեղային մետաղից պատրաստված ներդիրը: Ներդիրը պետք է պատրաստված լինի ծալված Π-աձև պրոֆիլի տեսքով և պետք է ունենա առնվազն 46,6 մմ տրամագծով անցք ու դրա շուրջը

			երկու բացվածք: Ներդիրի չափսերը պետք է կազմեն առնվազն 162×156×24 մմ: Կողային պատերի անցքերում պետք է տեղադրված լինեն սահքի առանցքակալներ: Սահքի առանցքակալը պետք է պատրաստված լինի ապակեթելքով ամրացված պոլիամիդից: Առանցքակալի արտաքին գլխիկի տրամագիծը պետք է կազմի առնվազն 62 մմ: Առանցքի համար նախատեսված նստեցման անցքի տրամագիծը պետք է լինի առնվազն 33 մմ, իսկ անցքի խորությունը՝ առնվազն 22 մմ: Առանցքակալի նստեցման տրամագիծը պետք է կազմի առնվազն 46 մմ: Այդ մակերեսով առանցքակալը պետք է տեղադրվի նախատեսված անցքի մեջ և գլխիկով հենվի կողային պատի, պատի կամ ներդիրի վրա: Մարզասարքի նստատեղը հավաքված վիճակում իրենից պետք է ներկայացնի թիթեղային մետաղից պատրաստված կորպուսային կառուցվածք՝ դրան ամրացված պլաստիկ նստատեղերով: Գամերի միջոցով պետք է ամրացված լինեն երկու հիմքեր՝ առնվազն 2,5 մմ հաստությամբ թիթեղային մետաղից: Հիմքերը պետք է ձևավորեն նստատեղի կորպուսի ուրվագիծը: Հիմքի չափսերը պետք է կազմեն առնվազն 284×485×35 մմ: Վերին մասում նստատեղի համար պետք է նախատեսված լինի առնվազն 282 մմ երկարությամբ և 35 մմ լայնությամբ ծալված եզր, իսկ հետևի մասում՝ առնվազն 485 մմ երկարությամբ և 35 մմ լայնությամբ ծալված եզր: Հիմքերում պետք է նախատեսված լինեն երկու անցքեր՝ առնվազն 46 մմ տրամագծով: Հիմքերին հետևի կողմից պետք է ամրացված լինի առնվազն 2,5 մմ հաստությամբ թիթեղային մետաղից պատրաստված մեջքի հենակը: Մեջքի հենակը պետք է լինի բաց կորպուսային կառուցվածքի ձևով ծալված դետալ, որը ծալումից հետո պետք է լինի առնվազն 844×170×40 մմ չափսերով: Մարզասարքի պլաստիկ նստատեղը պետք է պատրաստված լինի պլաստիկից և ունենա կլորացված անկյուններով, կտրված եզրերով սեղանաձև կառուցվածք: Նստատեղի չափսերը պետք է լինեն առնվազն 269×330 մմ, իսկ բարձրությունը՝ առնվազն 24,5 մմ: Վերին ճակատային մակերեսի՝ ստորին մակերեսին անցման հատվածում կլորացման շառավիղը պետք է կազմի առնվազն 20 մմ, իսկ ստորին եզրի կլորացման շառավիղը՝ առնվազն 3 մմ: Նստատեղի անկյունների կլորացման շառավիղները պետք է լինեն առնվազն 30 մմ: Նստատեղի ճակատային մակերեսն պետք է ունենա հատուկ նախշ՝ առնվազն 0,5 մմ բարձրությամբ ելուստով, որը պետք է ապահովի օգտագործողի հարմարավետ և կայուն դիրքը մարզասարքի վրա: Նստատեղի կառուցվածքում պետք է նախատեսվաած լինեն չորս M8 ընկույզներ, որոնք պետք է լինեն ներկառուցված նստատեղի մեջ և տեղադրված նստատեղի ձուլման գործընթացի ընթացքում:

			Ընկույզների համար պետք է նախատեսված լինի նյութի հաստացում՝ առնվազն 34 մմ տրամագծով գլանաձև հատվածի տեսքով, ինչը հնարավորություն է տալիս նստատեղը տեղադրել ցանկացած հարթ հարթակի կամ մակերեսի վրա: Ընկույզների առանցքամիջյան հեռավորությունները պետք է կազմեն համապատասխանաբար առնվազն 133 և 164 մմ՝ նստատեղի լայնության և երկարության ուղղություններով: Նստատեղի հակառակ կողմում պետք է նախատեսված լինեն 3 մմ հաստությամբ կոշտացնող կողեր: Նստատեղի ստորին հատվածին ամրացված է հենարանի վրա տեղադրված բուֆեր: Բուֆերը պատրաստված է ռետինե խառնուրդից, ունի առնվազն 170×40×75 մմ չափսեր և B-աձև կառուցվածք: Նեղ կողային հատվածում պետք է նախատեսված լինեն երկու անցքեր՝ առնվազն 10 մմ տրամագծով: Բուֆերը պետք է ամրացված լինի նստատեղին և լրացուցիչ՝ հենարանին, որը պետք է կանխի դրա պոկվելը: Կառուցվածքի ստորին հատվածում՝ մեջքի հենակի կողմից, պետք է նախատեսված լինի ոտքերի հենարան՝ առնվազն 4 մմ հաստությամբ թիթեղային մետաղից: Այն պետք է ծալված լինի П-աձև պրոֆիլի տեսքով՝ ծալված հենաթաթով: Հենարանի չափսերը պետք է կազմված լինեն առնվազն 400×50×78 մմ: Նստատեղի հավաքված վիճակում ընդհանուր չափսերը կազմում են առնվազն 393×400×977 մմ: Բռնակը իրենից պետք է ներկայացնի խողովակներից և թիթեղային մետաղից պատրաստված եռակցված կառուցվածք: Բռնակի հիմքը պետք է լինի սկավառակն է՝ խողովակով: Սկավառակը պետք է պատրաստված լինի առնվազն 6 մմ հաստությամբ թիթեղային մետաղից, պետք է ունենա առնվազն 164 մմ տրամագիծ և առնվազն 60 մմ տրամագծով կենտրոնական անցք: Սկավառակին պետք է եռակցված լինի առնվազն 76 մմ տրամագծով, պատի առնվազն 3,5 մմ հաստությամբ և առնվազն 132 մմ երկարությամբ խողովակից պատրաստված պատյան: Պատյանի մեջ պետք է կատարված լինի առնվազն 48×48 մմ չափսերով օվալաձև անցք, որը պետք է գտնվի խողովակի եզրից առնվազն 75 մմ հեռավորության վրա: Անցքը չպետք է լինի միջանցիկ: Պատյանի մեջ պետք է տեղադրված լինի մարզասարքի բռնակի հատվածը՝ առնվազն 48 մմ տրամագծով, առնվազն 3 մմ պատի հաստությամբ և առնվազն 812 մմ երկարությամբ խողովակից: Խողովակը եռակցման նպատակով պետք է տեղադրվի պատյանի անցքի մեջ մինչև հենվելը: Բռնակի խողովակային հատվածը պետք է ծալված լինի առնվազն 49° անկյան տակ և ունենա համապատասխանաբար առնվազն 142 և 470 մմ երկարությամբ ուղիղ հատվածներ: Երկար ուղիղ հատվածի ծայրում խողովակը պետք է սեղմված լինի մինչև իր տրամագծի կեսը: Բռնակի

ООО ВАНЕСА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/382 ниже представляет полное описание предлагаемого им товара.		**ПОЛНОЕ ОПИСАНИЕ предлагаемого товара** երկրորդ մասը պետք է պատրաստված լինի առնվազն 26,8 մմ տրամագծով և առնվազն 2,8 մմ պատի հաստությամբ խողովակից՝ օղակաձև հենակի տեսքով, որը պետք է տեղադրված լինի առնվազն 48 մմ տրամագծով խողովակի սեղմված հատվածի վրա: Հենակը պետք է ծալված լինի Г-աձև կառուցվածքի տեսքով՝ առնվազն 108° ծալման անկյուններով: Խողովակի ուղիղ հատվածների երկարությունները պետք է կազմեն համապատասխանաբար առնվազն 120 և 230 մմ: Հենակի վրա պետք է տեղադրված լինեն բռնակներ: Պլաստիկ բռնակը պետք է ունենա առնվազն 130 մմ երկարություն և դուրս ցցված հատվածում առնվազն 45 մմ տրամագիծ և նախատեսված լինի առնվազն 25 մմ տրամագծով խողովակի վրա տեղադրելու համար: Պլաստիկ բռնակը պետք է ծածկի մետաղական բռնակը և նախատեսված լինի ձեռքերի բռնման ու օգտագործողի կայուն դիրքն ապահովելու համար: Բռնակի ներքին տրամագիծը պետք է կազմի առնվազն 25 մմ, անցքը չպետք է լինի միջանցիկ չէ և պետք է ունենա առնվազն 125 մմ խորություն: Բռնակի վերին հատվածը պետք է պատրաստված լինի առնվազն 45 մմ տրամագծով ելուստի տեսքով, որի կլորացման շառավիղները պետք է կազմեն առնվազն 3 մմ: Ճոճաթևը հավաքված վիճակում իրենից պետք է ներկայացնի կտրված պրոֆիլային խողովակից և դրան եռակցված առանցքներից կազմված կառուցվածք: Ճոճաթևի հավաքված չափսերը պետք է կազմեն առնվազն 218×174×87 մմ:
Номер лота		Предлагаемый товар
	наименование производителя	Технические характеристики
10		